

**Ծագման երկրի հավաստագիր (սերտիֆիկատ) ստանալու համար
անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**

ա. դիմում-հայտարարագիր՝ համաձայն N 1 (ծագման երկրի հավաստագրի տրամադրման մասին) և N 1.1 (ծագման երկրի փորձաքննության կատարման) ձևերի *(տեղադրված է կայքէջում),*

բ. հումքի ձեռքբերմանը և ծագման երկրին վերաբերող փաստաթղթեր,
(Այդպիսիք են՝ հարկային հաշիվ, հաշիվ ֆակտուրա, գնման ակտ, ներմուծված լինելու դեպքում նաև մաքսային հայտարարագիր)

ինչպես նաև՝ փաստաթղթեր, որոնք հավաստում են արտահանվող ապրանքի՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվելու մասին
(Օրինակ՝ գյուղմթերքի դեպքում - տեղեկանք համայնքի ղեկավարից, հանքանյութի դեպքում - արդյունահանման լիցենզիա, թույլտվություն)

գ. տեխնոլոգիական քարտեր կամ այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա հրականացվում են արտադրական գործընթացները,

(Օրինակ՝ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կատարված տեխնոլոգիական պրոցեսների համառոտ նկարագիր՝ նշելով օգտագործած հումքերը և փուլերով կատարած տեխնոլոգիական պրոցեսները, որոնց կատարման արդյունքում ստացվել է վերջնական արտադրանքը)

դ. ապրանքների առաքման ձևակերպման փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագրի կամ դրան համարժեք՝ արտաքին տնտեսական գործունեության մեջ օգտագործվող այլ փաստաթղթերի պատճենները

(Սույն ենթակետով պահանջված փաստաթղթերից են՝ ապրանքի առաքման պայմանագիրը, ապրանքի տեղերի քանակը և քաշը պարունակող փաստաթուղթը /փաթեթավորման թերթիկ/)

(սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը ֆիզիկական անձինք
ներկայացնում են ըստ իրենց ցանկության)

**ե. հաշվապահական փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս պատշաճ
կերպով որոշել ապրանքի ծագման երկիրը**

*(Օրինակ՝ կախված օգտագործված հումքերի և արտահանվող ապրանքի ԱՏԳ ԱԱ
ծածկագրերից, համաձայն ապրանքի ծագման երկրի որոշման կանոնների,
հնարավոր է պահանջվի որոշել ծագման երկիրը ավելացված արժեքի եղանակով,
նման դեպքերում պետք է ներկայացվի արտահանվող ապրանքի գնագոյացումը
/կալկուլյացիա/)*

զ. վճարման անդորրագիր

*(փորձաքննություն պահանջող ապրանքների համար սերտիֆիկատի
տրամադրման վճարի չափը կազմում է 30 000 ՀՀ դրամ, իսկ փորձաքննություն
չպահանջող ապրանքների համար՝ 10 000 ՀՀ դրամ)*

Լրացուցիչ հարցերի առկայության դեպքում խնդրում ենք զանգահարել
հետևյալ հեռախոսահամարով՝

(+37460) 270 333